ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 25.06.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/76

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննելով Աբրահամ Սահակի Քարամյանի կողմից 05.06.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **Աբրահամ Սահակի Քարամյանի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

Աբրահամ Սահակի Քարամյանը 05.06.2018թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Պատվիրատուն իր կարիքների համար 16.04.2018թ. հայտարարել է ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար դաշտային շարժական բաղնիքների կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-7/1 ծածկագրով բաց մրցույթ:

Պատվիրատուն որպես հայտի ներկայացման վերջնաժամկետ նշել է՝ 2018թ. հունիսի 4-ը, ժամը 10:00-ն: Սակայն ՀՀ ֆինանսների նախարարության պետական գնումների պաշտոնական կայքում՝ www.gnumner.am և ARMEPS համակարգում www.armeps.am, որպես հայտի ներկայացման վերջնաժամկետ նշված է եղել՝ 04.06.2018թ., ժամը 11:00-ն:

Այսպիսով գտնում եմ, որ Ընթացակարգում առկա է անհամապատասխանություն, որի արդյունքում խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասը, համաձայն որի՝ հայտերը բացվում են հրավերում նշված օրը, ժամին և վայրում, հայտերի բացման նիստում: Հայտերի բացման օրը և ժամը պետք է համընկնեն դրանք ներկայացնելու վերջնաժամկետին:

Աբրահամ Սահակի Քարամյանը բողոքներ քննող անձին ներկայացված բողոքով խնդրել է՝ չեղյալ համարել ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-7/1 ծածկագրով բաց մրցույթը և հայտարարել նոր մրցույթ ՀՀ օրենքով սահմանված կարգով»:

Աբրահամ Սահակի Քարամյանը պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն չի ներկայացել:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասով՝ Բողոքներ քննող անձը դիմել է ՀՀ պաշտպանության նախարարությանը բողոքի վերաբերյալ որոշում կայացնելու նպատակով, նույն հոդվածով սահմանված ժամկետում Բողոքներ քննող անձին տրամադրել գրավոր դիրքորոշում, սակայն վերջինիս կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

ՀՀ պաշտպանության նախարարությունը պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

3. <u>ԳԲԽ-ԷՍ-2018/76 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է Աբրահամ Սահակի Քարամյանի կողմից 05.06.2018թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-7/1 ծածկագրով բաց մրցույթի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր).

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար՝ դաշտային շարժական բաղնիքների կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-7/1 ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ՝ նաև Մրցույթ):

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-7/1 ծածկագրով բաց մրցույթի հայտարարության տեքստում սահմանված է, որ հայտերի բացումը տեղի կունենա էլեկտրոնային գնումների armeps.am համակարգի միջոցով մինչև, 2018թ. հունիսի 4-ը, ժամը 10:00-ն:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարված ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-7/1 ծածկագրով բաց մրցույթ հրավերի 1-ին մասի 4-րդ կետի 4.2 ենթակետի համաձայն՝ Ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել համակարգի միջոցով ոչ ուշ, քան 2018թ. հունիսի 4-ը, ժամը 10:00-ն: Հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց հետո ներկայացված հայտերը չեն ընդունվում համակարգի կողմից:

Աբրահամ Սահակի Քարամյանը 05.06.2018թ. ներկայացված բողոքով հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարությունը 16.04.2018թ. հայտարարել է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-7/1 ծածկագրով բաց մրցույթ: Ընթացակարգի հայտերի բացման օր է սահմանվել 04.06.2018թ., ժամը 10:00-ը: Սակայն ՀՀ ֆինանսների նախարարության պետական գնումների պաշտոնական կայքում՝ www.gnumner.am և ARMEPS համակարգում www.armeps.am, որպես հայտի ներկայացման վերջնաժամկետ նշված է եղել՝ 04.06.2018թ., ժամը 11:00-ն:

Միաժամանակ բողոքին կից, բողոքաբերը Բողոքներ քննող անձին ներկայացրել է armeps.am համակարգում հայտերի բացման վերջնաժամետի վերաբերյալ տեղեկատվության կարճապատկերումը (screensho), որտեղ արտացոլված է՝ «ժամանակի սահմանափակում հայտերի ստացման կամ մասնակցության հայտերի համար՝ 04/06/2018թ., ժամը 11:00»:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք)՝

- 27-րդ հոդվածի՝ 2-րդ մասի՝

- 9-րդ կետի համաձայն՝ գնումների հայտարարությունը պարունակում է հայտեր ներկայացնելու ձևի, տեղի և ժամկետի մասին տեղեկություններ,

- 11-րդ կետի համաձայն՝ գնումների հայտարարությունը պարունակում է հայտերի բացման ձևի, վայրի, օրվա և ժամի մասին տեղեկություններ:

- 33-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը բացվում են հրավերում նշված օրը, ժամին և վայրում՝ հայտերի բացման նիստում: Հայտերի բացման օրը և ժամը պետք է համընկնեն դրանք ներկայացնելու վերջնաժամկետին:

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-7/1 ծածկագրով բաց մրցույթի հայտարարության տեքստում հայտերի բացման ժամկետը սահմանված է եղել՝ 2018թ. հունիսի 04-ը, ժամը 10:00-ն:

• ՀՀ ֆինանսների նախարարության պետական գնումների պաշտոնական կայքում՝ www.gnumner.am և էլեկտրոնային գնումների՝ armeps.am համակարգում հայտերի բացման ժամկետը սահմանված է եղել՝ 04.06.2018թ., ժամը 11:00-ը:

Նկատի ունենալով այն փաստական հանգամանքը, որ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար հայտարարված ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-7/1 ծածկագրով բաց մրցույթի հրավերում և հայտարարությունում հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել մինչև 04.06.2018թ. ժամը 10:00-ն, իսկ էլեկտրոնային գնումների armeps.am համակարգում՝ 04.06.2018թ. ժամը 11:00-ն, Բողոքներ քննող անձը գտնում է, որ Պատվիրատուն խախտել է Օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝ Բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Աբրահամ Սահակի Քարամյանի կողմից 05.06.2018թ. ներկայացրած բողոքը բավարարել մասնակի:

2. Պարտավորեցնել ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-7/1 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին ընդունել՝ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-7/1 ծածկագրով բաց մրցույթը չկայացած հայտարարելու մասին համապատասխան որոշումը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ